

Գ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՅԻ ԻԿ ԱԿՈՒՄ-ՀԱՍՊԻՑԱԼՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայրենական Մեծ պատերազմը ավարտվեց սովետական ժողովրդի լիակատար հաղթանակով:

Այդ տիտանական պայքարի ծանրությունն ընկած էր մեր երկրի, և առաջին հերթին ոռու մեծ ժողովրդի վրա: Մեր երկրի բոլոր ժողովուրդները, ի թիվս որոնց և հայ ժողովուրդը, ձեռք-ձեռքի տված ոռու մեծ ժողովրդի հետ, ամբողջ պատերազմի ընթացքում իրենց բոլոր միջոցներով պայքար էին մղում հաղթանակի, նվաճման համար:

Հայկական ՍՍՌ-ում տարատեղված էվակուա-հոսպիտալների աշխատանքը գրավեց Հայկական ՍՍՌ-ի բժշկական ամսով հասարակայնությունը՝ սանիտարուհիներից մինչև պրոֆեսորները: Խնչպես և մեր մյուս եղբայրական ռեսպուբլիկաներում, վիրավորներին տրված օժանդակության գործում բժշկական աշխատողներին օգնության եկան մեր ռեսպուբլիկայի ամբողջ հասարակայնությունը, պարտիական-կոմերիտական կազմակերպությունները, արհմիությունները, Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը, առանձին հիմնարկներ, ինչպես նաև բնակչության արտահիմնարկային խավերը, անային տնտեսուհիները և այլն:

Ուշիստական Գերմանիայի ուխտագրութ և անսպասելի հարձակումը պահանջում էր էվակուա-հոսպիտալների շուտափութ ծավալում՝ վիրավորների ընդունման և բուժման համար:

Նախագծված պլանի համաձայն ռեսպուբլիկայում տարատեղված հոսպիտալները կազմակերպվել էին իր ժամանակին: Այդ ժամանակաշրջանում հոսպիտալների կազմակերպումն արագացնելու նպատակով ստեղծված կազմակերպությունները, բժշկական ամբողջ կազմը, այդ թվում նաև բժիշկները, թևերը քշտած

կատարում էին ամեն աշխատանք, նույնիսկ շենքերի սանիտա-  
րական բարեկարգման գործը:

Բոլոր հոսպիտալները լրիվ բավարարված էին բժշկական  
գույքով, կոմպլեկտավորված լավագույն բժշկական կադրերով-  
Բժշկական ինստիտուտի բազմաթիվ աշխատողներ՝ ասիստենտ-  
ներ, դոցենտներ և պրոֆեսորներ, հոսպիտալներում հաստիքային  
պաշտոններ էին վարում պատերազմի սկզբից մինչև վերջը:

Ինստիտուտների մեացած աշխատողները, կլինիկական ու թեո-  
րետիկ ամբիոնների համարյա բոլոր պրոֆեսորները, դոցենտներն  
ու ասիստենտները կոնսուլտանտներ էին՝ յուրաքանչյուրն իբ-  
մամագիտությամբ:

Հոսպիտալների պրակտիկ աշխատանքի առաջին իսկ օրե-  
րից սուր կերպով ծառացավ բժշկական և քույրական կազմերի  
պատրաստման ու վերապատրաստման հարցը, ըստ որում ան-  
հրաժեշտ էր հաշվի առնել պատերազմական մշակվածքների բուժ-  
ման ամբողջ առանձնահատկությունը: Եվ ահա, բուժական աշ-  
խատանքների նշանակալի բեռնվածությանը զուգընթաց, սկըս-  
վում է հենց իրենց փորձված ուսուցիչների ուսուցումը և  
նրանց սիստեմատիկ ու կանոնավոր պլանավորված պարապ-  
մունքները բժիշկների ու քույրերի հետ: Բժիշկների որակավո-  
րումը, բացի այդ կանոնավոր պարապմունքներից, ընթանում  
էր կուրսերի կազմակերպման, հատուկ դասախոսությունների,  
սեմինար պարապմունքների, հիվանդների կլինիկական վիրաւծ-  
ման, հոսպիտալների ղեկավար աշխատողների ակադեմիական  
շրջանցումների ուղիղով:

Կազմերի պատրաստման գործում վճռական դերը պատկա-  
նում էր Բժշկական ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական  
կազմին:

Բժիշկների ու քույրերի որակավորման նախապատրաստումները  
ու բարձրացումը ամբողջ պատերազմի ընթացքում տարվում էր  
ինչպես բժիշկների գիտելիքների առավել խորացման նպատա-  
կով, նույնպես և ուղմանակատ ուղարկվող բժիշկներին նորե-  
րով փոխարինելու անհրաժեշտությունից դրված:

Մեր պրոֆեսորա-դասախոսական կազմի՝ հոսպիտալների  
Բժշկական կազմի նախապատրաստման ու որակավորման բարձ-  
րացման գծով տարած աշխատանքի հետևանքը եղավ հոսպի-  
տալների բուժական աշխատանքի պատշաճ դրվածքը: Դրա վրա

ՀՅՐ աղդում նույնիսկ հոսպիտալների շափաղանց բեռնավորումը վիրավորներով, որովհետև տաճայակ բժիշկներ, անցյալում վիրաբուժության մեջ անփոք, նույնիսկ դանակ չըռնած, կատարում էին հմուտ վիրահատումներ և զործիմաց կերպով տանում էին պահանջվող բուժման ամքողջ կոմպլեքսը: Տեխնիկումները հնաց նոր ավարտած, կամ պատերազմի ընթացքում ստեղծված կարճատև կուրսոն ավարտող հարյուրավոր քույրեր, որոնք հոսպիտալ էին եկել թույլ գիտելիքներով ու անփոք էին գործնականորեն, հնաց հոսպիտալներում ավագ ու կրտսեց բժիշկների օգնությամբ սովորում էին ինամել վիրավորներին, գիտային կապեր զնել, կատարել արյան ներարկում, մասամբ, Փիզիոթերապիա, զինտաթերապիա, բուժական ֆիզկուլտուրա, պարագինաթերապիա և այլն:

Բավական է նշել, որ պատերազմի ընթացքում (չաշված էրն փորձված վիրաբուժներին) փոքր, երբեմն նաև մեծ վիրահատումներ էին կատարում 47 բժիշկ, 9 բժիշկ կատարում էին ներկային պերիֆերիկ համակարգի հմուտ վիրահատումներ և 6 բժիշկ՝ այլ մասնագիտությունների զծով:

Այդ ընթացքում սովորել և գործնականորեն արյան ներարկում են կատարել 215 քույր, գիտային կապեր են դրել 120 քույր, մասամբ են կատարել 270 հոգի, ֆիզիոթերապելութիկ կարիսներում աշխատանք են տարել 85 հոգի, բուժ. ֆիզկուլտուրա են անցկացրել 80 հոգի և այլն:

Էվակուա-հոսպիտալների բուժական աշխատանքի կազմակերպման գործում կիրառվում էր ոչ միայն սովետական լավագույն կլինիկաների փորձը, այլև ուղղմա-բժշկական դոկտրինայի լուսաբանման պահանջով՝ Հայրենական Մեծ պատերազմի շրջանում կլինիցիատների կողմից վերանայվում էին բուժական պրոցեսների բազմաթիվ հին տեսակներ, որոնք գործադրվել էին խաղաղ ժամանակ, և ներմուծվում էին վիրավորների բուժման նոր մեթոդներն ու վիրավորումների հետևանքների պրոֆիլակտիկան:

Կլինիկաներից և ոչ մեկում այնպես ճիշտ ու կանոնավոր չէր կազմակերպված վիրավորների ու հիվանդների կոմպլեքսային բուժումը, ինչպես զա կազմակերպված էր և գործնականորեն տարվում էր էվակուա-հոսպիտալներում:

Էվակուա-հոսպիտալներում վիրավորների բուժումն ընթանում էր հետեւյալ կերպ. յուրաքանչյուր վիրավոր ժամանակին

պետք է ստանար բարձրութակ բժշկական օդնություն։ Այդ նպաւտակով հոսպիտալ ընդունվող բոլոր վիրավորները առաջին 24 ժամվա ընթացքում մասնագնին գիտավում էին բուժող բժշկի և անզատնառ գլխավոր մասնագեաների կողմից, Ընդունման առաջին երկու օրը վիրավորները հնթարկվում էին ախտորոշիչ (դիագնոսաբիկ) հետազոտության՝ բոլոր անհրաժեշտ լրացրցիչ մեթոդներով—լաբորատորական, ռենտցինոլոգիական, անհրաժեշտ զետքերում կատարվում էր ողնուղեղային պունկցիա, կիրավում էր ցիստոսկոպիա և այլ ախպի ինստրումենտալ հետազոտություններ։

Այնուհետև վիրավորներին նայում էին մասնագեաները՝ ակնարույցը, ներվոպաթոլոգը, թերապելուը, օտորինոլարինգոլոգը, մաշկաբանը և այլն։

Այսպիսի կոմպլեքսային և բազմակողմանի հետազոտության շնորհիվ յուրաքանչյուր վիրավորի համար մշակվում էր բուժման տնհատական պլան։

Բուժման տարբեր մեթոդների (օպերացիոն միջամտություն, արյան ներարկում, ֆիղիոթերապիա, մասած, պարաֆինաթերապիա, նաֆթալանաթերապիա, բուժական ֆիզկուլտուրա, վիտամինաթերապիա, բուժական սնունդ և այլն) գերազանց զուգակցումը ավեց փայլուն արդյունքներ։ Վիրավորների 83% ը որպես ծառայության պիտանի՝ դուրս գրվեցին և կրկին մարտաշարք մտան։

Գատերաղմի առաջին տարիներին, քանի դեռ ռազմաճակատը մոտեկ էր, ուղամիկները վիրավորվելուց հետո հոսպիտալ էին հասնում համեմատաբար վաղ, իսկ զրա շնորհիվ հոսպիտալ էր մտնում ինչպես ծանր, այնպես էլ թեթև վիրավորների մի խառն կոնտինգենտ, մի հանգամանք, որ ավելի հնարավոր էր դարձնում վիրավորների դուրս գրումը մարտաշարք։ Վերջին երկու տարում, ռազմաճակատի հեռանալու պատճառով, թեթև վիրավորներն արդեն նախընթաց հանգրվաններում ցըլում էին և Հայստանի հոսպիտալներն էր հասնում առավել ծանր վիրավորների կոնտինգենտ, հաճախ վերքի երկուսից-երեք ամսյա վաղեմությամբ և դրանց մեջ շատերը՝ զինվորական ծառայության համար արդեն անընդունակ։ Հենց դրանով է ըացատրվում մարտաշարք վերապարձո՞ների տոկոսի նվազումը պատերազմի ավարտական շրջանում։ Մահացության տոկոսը էվակուա-հոսպիտալներում պատերազմի ամբողջ ընթացքում իրաւունք նվազ էր։

Հայաստանի էվակուա-հոսպիտալների աշխատակիցների առաջարկած և հաջողությամբ կիրառած բուժական նոր մեթոդ ներից անհրաժեշտ է հիշել.—

1) Փափուկ հյուսվածքների դժվարաբուժ վերքերի բուժումը ունետենայն հոգազայթներով։ Այս մեթոդը, առաջարկված գոյցենտ Զ. Մ. Մովսիսյանի կողմից (էվակուա-հոսպիտալ որի պետն էր Մելիք-Քարամյանը), լայն կիրառություն գտավ բացի հիշյալ հոսպիտալից նաև Հայաստանի մի շարք այլ հոսպիտալներում։

2) Վերքերի բուժման հմմոքորային մեթոդը, առաջարկված հոսպիտալ որի պետն էր Պողոսյանը գլխավոր վիրաբույժ պլրոֆ. Պոլիեկտոմի կողմից, հաջողությամբ կիրառվեց այդ նույն հոսպիտալում։

3) Կառուղալզիկ սինդրոմի բուժումը կրկնակի նովոկայինային բլոկադով՝ առաջարկված Ի (պետ Ռ.վազյան) հոսպիտալի դեկանար վիրաբույժ պլրոֆ. Ս. Շահրիմանյանի կողմից։ Գրինշտեյնի առաջարկած միանվագ հարողնաշարային նովոկայինային բլոկադը կառուղալզիկի բուժման համար հաճախ էֆեկտ չէր տալիս. պլրոֆ. Շահրիմանյանի առաջարկով նույն այդ մեթոդը բազմակի կիրառմամբ օգտագործելիս՝ տվեց նշանակալի հաջողություն։

4) Երկարատև ու դժվարաբուժ վերքերի ու խոցերի հատուման-հերձման տեխնիկայի բարելավում՝ առաջարկված պլրոֆ. Շահրիմանյանի կողմից։ Առերեւոյթ պարզ մի միջոցառում (օպերատիկ միջամտության փոխարեն տեղի թեք դրություն՝ կրկնակի կարի բնունվածության դեպքում արյան հոսանքի համար), որ առաջարկեց պլրոֆ. Շահրիմանյանը, գրական հետեւանքներ տվեց շատ ակնառու տոկոսով։

5) Կոնտրաստային նյութի կիրարկում թարախուտի խոռոչը ուղեղային թարախակալման դեպքում, իրացված նույն էվակուա-հոսպիտալի դոցենտ Թոխոյանի կողմից, հանարավորություն էր ընձեռում բազմաթիվ թարախուտների ժամանակ հայտնաբերել բուլոր խոռոչներն ու ճշտել օտարածին մարմնի տեղակայումը։ Այդ մեթոդիկան հաջողությամբ կիրառում էր էվակուա-հոսպիտալը պատերազմի վերջին տարվա ընթացքում։

6) Հրազնային ծագում ունեցող խրոնիկական պլեվրային էմպիսմաների բուժման ժամանակ պլրոֆ. Գ. Հ. Մելքոնյանը՝ կատարելով Շեղի սկզբունքով կողերի խնայողական հատմամբ թոքակոպտական՝ տվեց լրիվ ապաքինման բարձր տոկոս (83<sup>0</sup>/<sub>0</sub>)։

7) Նույնի էքսպերիմենտալ աշխատանքը՝ կատարված շների

վրա, ըստ կիմոնգրաֆիկ կորերի, ցույց տվեց, որ սրտանոթային սիստեմի խախտումները, որոնք հետևում են տրավմատիկ պնևմոթորաքսին, հանդիսանում են մասսված պլերային թերթիկների կողմից հարուցված վագո-սիսպատիկ ռեֆլեքսների արդյունք:

8) Պրոֆ. Ք. Հ. Պետրոսյանը առաջարկեց ձնկոսկը (հաճակուննիկ) ջարդվածքների կարի նոր ձև: Այդ վիրահատաման առավելությունն այն է, որ առողջացումն ու ռեպոզիցիաները նշանակալից կերպով հաջող են կատարվում: Աշխատությունը առաջրված է 1942 թվի „Գոսпитալյուն առաջարկած հանդիսում:

9) Պրոֆ. Ք. Հ. Պետրոսյանը առաջարկեց նաև աներիդմների բուժման նոր եղանակ մեքենակարի գործադրությամբ: Այս եղանակի կիրառմամբ պահպանվում է անոթի արժեքը. ապագինման և վերջավորությունների պահպանման առկուը մյուս եղանակների համեմատությամբ բարձր է լինում: Աշխատությունը առաջրված է 1943 թվին „Գոսпитալյուն առաջարկած հանդիսում:

10) Պրոֆ. Ք. Հ. Պետրոսյանը հնարեց և առաջարկեց վերջավորությունների կոնտրակտուրների բուժման ապարատ, որը փայլուն արդյունքներ է տվել:

11) Աշխատելով պրոֆեսորներ Թերոբյանի և Պետրոսյանի ղեկավարությամբ, բժիշկ Օսնան (Ճ-ք Օսնա) կիրառեց մաշկային-պլաստիկ ձևափոխված վիրահատում խեղված անդամների վերջավորությունների վրա: Նրա կողմից կիրառված եղանակը լավ բարձիկ տվից խեղանդամի ծայրամասի հենման համար:

12) Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանն առաջարկեց և գործադրեց սահմանափակությունների վերաբարեկանացնելով:

Էվակուա-հոսպիտալների բժիշկները զերծ էին ամեն կարգի դանդաղկոտությունից և պաստիվությունից: Առաջնորդվելով բացառապես հիվանդներին բժշկական օգնություն ցուցաբերելու ցանկությամբ, բացի իրենց կողմից առաջարկված և կիրառվող մեթոդներից, նրանք անխոնջ կերպով հետևում էին սովետական բժշկագիտության՝ պատերազմի ընթացքում ունեցած նվաճումներին և հաջողությամբ յուրացնում էին այն բոլոր լավագույնն ու արժեքավորը, որ կարող էր բուժել վիրավորներին, նվազեցնել պատերազմական մասսվածքների վտանգավոր հետևանքները և մարտիկներին արագորեն մտրաշարք վերադարձնել:

Յուղված բոլոր դեպքերում առանձնապես օգտագործվում է բարյան փոխներարկումը (Երանցիուզիա), որ վերքերի բուժման և սեպսիսի դրծում ուներ ամենաակտուալ նշանակություն:

Արյան փոխներարկման դեպքերը տարեց-տարի ավելանում էին: Բավական է ասել, որ բազմաթիվ էվակուա-հոսպիտալներում վիրավորների  $10-30\%$ -ը ենթարկվում էր արյան փոխներարկման Հայաստանի՝ Արյան փոխներարկման կայանի (դեկաֆար՝ պրոֆ. Յովան) լավագույն աշխատանքի շնորհիվ ապահովված էր բոլոր հոսպիտալների մշտական մատակարարումը արյամբ:

Հոսպիտալներում վերքերի բուժման ընթացքում չափազանց լայն կիրառում գտան այնպիսի փորձված միջոցներ, ինչպիս ստրեպտոցիզը, սուլֆիդինը, զրամիցիդինը, Պենիցիլինը Հայաստանում օգտագործվում էր ոչ բավականաչափ՝ դրա սահմանափակ քանակության պատճառով:

Ի եվակուա-հոսպիտալում մեծ չափով օգտագործվում էր անտիբիոտիկուլցյար ըիմոտոֆսիկ շիմուկը (Ա. Ա. Շողոմոլեցի) հրազդինային վերքերի դեպքում, երբ վերջիններս բարդանում էին ընդհանուր վարակումով (սեպսիսի, վիրային հյուծման, հրազդինային ջարզվածքների դանդաղ կոնսուլտացիայի, փափուկ հյուռված քնների երկարատև վերքերի, հրազդինային խրոնիկական օստեոմիելիտների և կրծքավանդակի բարդացած վերքերի ժամանակի՝ տալով մեծ էֆեկտ հատկապես սեպսիսի և վիրային հյուծման նկատմամբ:

Սկսած 1942 թվից հոսպիտալներն անցան տեսական վերքերի ու խոցերի բուժման ակտիվ մեթոդին՝ հատմանը, որին հետեւմ է խուլ կարք: Հատումից ստացված հետևանքները միանգամայն բարեհաջող էին, ուստի և այդ մեթոդը օգտագործվում էր ամբողջ պատերազմի ընթացքում:

Ինչպես հայտնի է, վերքերի բուժման բոլոր մեթոդներից ամենաարժատականն ու աղղոցիկը օպերատիվ միջամտությունն է, որը լայնորեն կիրառվում էր, տարեց-տարի տարածվելով ավելի ու ավելի: 1945 թվին բազմաթիվ հոսպիտալներում հիվանդների  $23-40\%$ -ը ենթարկվում էր բուժման այդ մեթոդին: Ինչպես բազմիցս նշվել է Ռազմա-բժշկական վերադաս հանձնաժողովի կողմից, կատարված վիրահատումների ներգործությունը ուժեղ է եղել և այդ միանգամայն հասկանալի է, քանի որ համեմատարար բարդ և ծանր վիրահատումները կատարում էին

ռեսպուբլիկայի լավագույն վիրաբուժները՝ պրոֆեսորներ Մելքոնյանը, Շահրիմանյանը, Յոլյանը, Գետրոսյանը, Թերորյանը, գոցենտներ՝ Կարապետյանը, Դուրինյանը, Պարոնյանը, Սարուխանյանը, Թոփյանը, Արբահամյանը, Սահակյանը, փորձված վիրաբուժներ՝ Այդինյանը, Թովմասյանը, Իսահակյանը, Մարտիկյանը, Մալիսայանը, Արեշյանը և այլն (բոլորն էլ էվակուտնոպիտականներում տարված աշխատանքների համար պարզեատըրված են շքանշաններով ու մեղալներով),

Մասնագիտացված էվակուա-հոսպիտալներում խիստ արժեքավոր օժանդակություն էին ցուցաբերում բարձրորակ մասնագետներ՝ պրոֆեսորներ Անֆիմովը, Ն. Վ. Միրտովսկին, Հ. Ա. Հարությունյանը, Ա. Ա. Մեհրաբյանը, գոցենտներ՝ Գ. Հ. Միրզոյանը, Ա. Հ. Արբահամյանը, Բ. Ն. Մելիք-Մուսյանը, բժշկական գիտությունների թեկնածու Հ. Հ. Աստվածատրյանը, հոգուածիչներ Խ. Ա. Փարսադյանյանը, Թ. Մ. Բարայանը և ուրիշներ:

Թերապեվտիկ և վիրաբուժական հոսպիտալներում մշտական կոնսուլտացիոն օժանդակություն էին մատուցում ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանը, գիտության վաստակավոր գործիչներ՝ պրոֆեսորներ Ա. Ա. Մելիք-Աղամյանը և Ռ. Ն. Գյանջունցյանը:

Հատուկ կարինետները, լավ սարքավորված ու որակյալ կադրերով ապահովված լարորատորիաները՝ ռենտգենյան, ֆիզիոթերապեվտիկ, բուժական ֆիզկուլտուրայի, ՈՒՎԶ թերապիայի, ջրաբուժական, ատամնաբուժական, ատամնապրոտեզային և այլն, պատերազմի ընթացքում ցուցաբերել են բարձրորակ աշխատանքի այնպիսի օրինակներ, որպիսիք աներևակայելի էին նախապատերազմյան ժամանակաշրջանում:

Պատերազմի սկզբուց մեկ-երկու ամիս հետո բժշկական մասնագիտական օգնության հարցը գործնական բնույթ ստացավ: Վիրավորների տեսակավորման և հոսպիտալների պրոֆիլի հարցը լուծվեց Առողջապահության Մինիստրության էվակուա-հոսպիտալների վարչության կողմից և արդեն 1941 թ. վերջին կազմակերպված էին հետեւյալ մասնահատուկ հոսպիտալները՝ ծնոտադիմային—օտոլարինգոլոգիայի և ակնային բաժիններով, նեյրոլուրուրական հոսպիտալ, հոսպիտալներ՝ մաշկային-վեներուլոգիական և միզարանական բաժիններով, նեղ պրոֆիլ ունեցող հոսպիտալներ՝ անդամաթասության ենթակա վիրավորների և կրծքի ու աղդըրի վերքերով տառապող վիրավորների համար և այլն: Հոսպիտալների մասնագիտացումը մեծ նշանակություն

ունեցավ, որովհետև այն վիրավորները, որոնք կարիք ունեին հատուկ թժշկական օգնության, անկարող էին այն ստանալ ընդհանուր վիրաբուժական հոսպիտալներում, որտեղ կձգձգվեր նրանց առաքինումը:

Մեր մասնագետների գիտելիքների, բուռն եռանդի և անխոնջ աշխատանքի շնորհիվ մասնահատուկ հոսպիտալներում ու բաժիններում մշակվում ու գործադրովում էին պատերազմական վասպածքների և նրանց բարզացումների գիտազնուստիկայի նոր նուրբ մեթոդներ: Մասնագիտական օգնության գործի հաջող լուծումը հատուկ նշանակություն ունեցավ, մասնավանդ որ Հայաստանի էվակուա-հոսպիտալներն ընդունված վիրավորների մոտ մեկ քառորդը կարիք ուներ նման բուժման մասնահատուկ հոսպիտալներում:

Գիտա-հետազոտական աշխատանքը մի քանի հոսպիտալներում մեծ ծավալում ունեցավ և մեծ գեր խաղաց՝ ինչպես թժշկների օրակավորման բարձրացման, նույնպես և նոր գաղափարների ու գործնական առաջարկների ծագման հարցում: Այդ առաջարկները մեծ հաջողությամբ կիրառվում էին վիրավորների ու հիվանդների բուժման ընթացքում: Միջնորդիտալային և ներհոսպիտալային գիտական կոնֆերանսներում չափազանց նշանակալից էր ոչ միայն ղեկավար փորձաշատ գիտական աշխատողների, այլև երիտասարդ թժշկների ակտիվ մասնակցությունը: Նրանք հանդես էին գալիս կոնֆերանսներում իրենց գիտական տեղեկություններով, օրիգինալ ղեկուցումներով, հիվանդների ցուցադրումով, ունիվերատային ղեկուցյներով: Նեյրո-խիրուրգիական հոսպիտալում գիտական կոնֆերանսները իրենց գիտական բարձր մակարդակով ներդրավում էին մայրաքաղաքի բոլոր ներկրողաթոլոգներին ու հոգեբուժներին: Շատ հոսպիտալներում գիտական կոնֆերանսները գումարվում էին կանոնավոր ամիսը երկու անգամ:

Բացի կոնֆերանսներից, որտեղ լսվում էին օրիգինալ ղեկուցումներ և վիրավորներ էին ցուցադրվում, բոլոր էվակուա-հոսպիտալներում անպայման կազմակերպվում էին պաթոլոգա-անատոմիկական կոնֆերանսներ, որտեղ ժամանակին քննվում էին մահվան բոլոր ղեղաքերը: Այս քննությունը տարվում էր հնարավորության սահմաններում պաթոլոգա-անատոմի մասնակցությամբ, ընդորում յուրաքանչյուր անգամ ներկայացվում էր գրական լայն վերլուծում: Հենց այդ պատճառով բոլոր պաթոլոգա-

անատոմիկական կոնֆերանսները անցնում էին բավականաչափ հետաքրքրական և տալիս էին զործնական արդյունքներ:

Միջնորդիտալային կոնֆերանսները կազմակերպվում էին էվակուա-հռոմեական կարգության կողմից ամեն տարի:

Բոլոր հոսպիտալների զեկուցումների թեմատիկան բացառապես պաշտպանական բնույթ էր կրում: Լավագույն և օրիգինալ զեկուցումները կրկնվում էին միջնորդիտալային կոնֆերանսներում և Երևանի բժշկական ինստիտուտի կազմակերպած գիտական սեսիաների նիստերին: Այդ ձևով կարդացվել է 54 զեկուցյաց, բժշկական պարբերական մամուլում հրատարակվել է 18 և տպագրության է հանձնվել 22 աշխատանք: Էվակուա-հռոմիտալների մատերիալներով նախապարաստվել են 7 դիսերտացիոն աշխատանքներ, որոնցից 5-ը բժշկական գիտությունների թեկնածուի և երկուսը՝ գոկտորի աստիճան ստանալու համար:

Գիտա-հետազոտական աշխատանք էր տարվում նաև հոսպիտալների բժշկական միջին պերսոնալի կողմից, որի համար ամիսը մեկ անգամ կազմակերպվում էր միջնորդիտալային կոնֆերանս:

Անկարելի է չնշել էվակուա-հռոմիտալների ախտականիչ մեծ աշխատանքը, որ տարվում էր ինչպես հոսպիտալների ներսում, նույնպես և զուրսը՝ իրենց ենթաշեֆ ույաններում: Զնայած սուր վարակիչ ինֆեկցիաների ներմուծման մեծ հնարավորությանը, պատերազմի ամբողջ ընթացքում ներհռոմիտալային վարակման և նշանակած զի արձանագրվել: Կանխատիւման և պրոֆիլակտիկ բուրու միջոցների ճիշտ օգտագործման շնորհիվ բժանավոր ու որովայնային տիֆով վարակված վիրավորները, որոնք հոսպիտալներն էին դալիս ուղղմանանիւարական գնացքներից, անմիջապես առանձնացվում էին և վարակը լիկվիդացվում էր: Դիզենտերիայի առավողությունը հաստիացված առանձին հոսպիտալում, ընդորում ըուժման միշտ գրվածքի և պրոֆիլակտիկայի շնորհիվ վարակը չէր անցնում զինվորական մասերը: Հակաէպիդեմիական աշխատանքին քիչ չէր օգնում պրոֆեսորների կողմից հաջող կազմակերպված սանիտարա-լուսավորական աշխատանքը, որ տարվում էր վիրավորների ու հիվանդների մեջ: Այդ աշխատանքն ուներ որոշակի սահմանված պլան ու թեմատիկա: Էվակուա-հռոմիտալների

բուժական ու հակաէպիդեմիական աշխատանքի հաջողությանը անշուշտ օժանդակում էր տնտեսական գործի հաջող զրվածքը:

Զայած եղած դժվարություններից ամբողջ պատերազմի ընթացքում վիրավորների սնումը հոսպիտալներում պատշաճ բարձրության վրա էր գտնվում: Սահմանված կալորաժը պահպանվում էր նորմանների բարձրացման միջոցով՝ լրացուցիչ մատակարարման աղբյուրների հաշվին, որ ստացվում էր հոսպիտալների օժանդակ տնտեսություններից և շիֆային կազմակերպություններից: Հոսպիտալներում մեծ ուշադրություն էին դարձնում պատրաստվող ուտելիքների բազմազանության ու համեղության և օրբռաժնի սննդի վիտամինային հարստացման վրա: Օժանդակ տնտեսությունների մթերատվությամբ ապահովվում էր վիրավորների երկարատև ու լիառտ մատակարարումը թարմ բանջարեղեններով՝ պամիդրորով, կաղամբով, ճակնդեղով, գաղարով, կանաչեղենով, կարսոֆիլով և ուրիշ մթերքներով: Օժանդակ տնտեսությունների բերքի 30—50% ը հատկացվում էր վիրավորների լրացուցիչ սնունդին, 50—70% ը բաց էր թողնվում հոսպիտալները սպասարկող կազմին: Այս միջոցառումը՝ բարելավելով նրանց նյութական դրությունը, ինչան էր հանգիստանում նրանց աշխատանքի որակի բարձրացման համար և ի վերջո ապահովում էր վիրավորների ու հիվանդների ավելի լավ ինտամքը:

Էվակուա-հոսպիտալների աշխատանքում հսկայական դիր էր խաղում ինչպես փոփոխվող կազմի՝ վիրավորների ու հիվանդների, այնպես էլ մշտական անձնակազմի գաղափարական քաղաքական դատիւթյունը:

Հայրենական Մեծ պատերազմի պայմաններում պարտիական քաղաքական աշխատանքի այդ բնագավառը առանձնապես սուր և նշանակալի դեր խաղաց:

Վիրավորներն ու հիվանդները, որոնք ստիպված էին երկար ժամանակ գտնվել հոսպիտալներում, հաճախ գամլած անկողնին, հեշտությամբ կարող էին կորցնել կյանքի հեռանկարը և նույնիսկ հուսահատության ժամնվել Բացի նրանց հանդեպ ցուցաբերվող մայրական խնամքից ու զգայուն վերաբերմունքից, անհրաժեշտ էր բարոյական նեցուկ հանդիսանալ նրանց, պահել նրանց մշտական կորովի մեջ, որպեսզի առողջանալուց հետո՝

վերադառնալով զորամաս, նրանք կարող լինեին կատարել իրենց պարտը Սովետական Հայրենիքի հանդեպ:

Հոսպիտալներում պարտիական-քաղաքական աժբողջ աշխատանքը տարվում էր Գերագույն Գլխավոր Հրամանատար լիներ Ստալինի զեկուցումների, հրամանների, կառավարության ու պարտիայի ողոշումների իրագործման ուղղությամբ: Առաջնորդվելով այդ ցուցումներով՝ պարտիական-քաղաքական աշխատանքը վիրավորների մեջ արգում էր հիվանդների կողմից ներհոսպիտալային կարգ ու կանոնի խիստ կտարարման, ռազմական գիսցիպինայի ամրապնդման, գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ աճող ատելության խորացման, մեր սոցիալիստական Հայրենիքի հանդեպ սեր ու անձնվիրություն ցուցաբերելու տեսանկյունով և հոսպիտալային աշխատողների վերաբերյալ՝ վիրավորների ու հիվանդների լավագույն խնամքի և բուժման ապահովման, ժողովրդական գույքի պահպանման, աշխատանքային գիսցիպինայի ամրապնդման գծով:

Սովետական երկրի աշխատավորները Հայրենական Մեծ պատրազմի օրերին ցուցաբերեցին ժողովրդի շահերին անձնվիրաբար ծառայելու փայլուն օրինակներ և հոգատարություն՝ պատերազմի հերոսների, հաշմանդամների ու նրանց ընտանիքների, հոսպիտալներում բուժվող հիվանդների ու վիրավորների հանդեպ: Սովետական Հայաստանի աշխատավորները մեծ հոգատարություն ու ուշադրություն ցուցաբերեցին էվակուա-հոսպիտալների վիրավորների ու հիվանդների նկատմամբ: Այդ հոգատարությունն արտահայտվում էր շեքային կազմակերպությունների՝ կոլխոզներիների, գործարանային բանվոր-բանվորուհիների, տնային տնտեսուհիների ամենօրյա աշխատանքում: Զիուսափելով ոչ մի աշխատանքից, նրանք հավաքվում էին հիվանդասրահները, լվանում, նորոգում, արդուկում էին սպիտակեղենը, ծաղիկներ, վարագույրներ էին բերում, հաճելի տեսք էին տալիս հիվանդասենյակներին, խնամում էին ծանր վիրավորներին, կերակրում, նամակներ էին գրում նրանց համար, եռանդով մասնակցում էին կուլտուրական ժամանցի գործին և վերջապես վիրավորներին հսկայական քանակությամբ նվերներ էին բերում:

Ամբողջ ժողովրդի ու Սովետական Բանակի հետ միասին իրենց պարտին էին կատարում Հայրենիքի հանդեպ Հայկական Ռես-

պուղչակայի Առողջապահության Մինիստրության Էվակուա-  
հոսպիտալների աշխատազները Նըանք ապահովեցին հիվանդների  
ու վիրավորների լավագույն բուժումը Բժիշկների բժշկական  
քույրերի և սպասարկող անձնակազմի տնօնվեր աշխատանքներ  
հետեւանքով տասնյակի հազարավոր վիրավորներ ու հիվանդներ  
վերագրձան Սովետական Բանակի շարքերը և աշխատանքային  
գործունեության

Պարտիան ու կռուավարությունը բարձր զնահատելով նրանց  
աշխատանքը՝ վիրավորների օրինակելի խնամքի ու բուժման հա-  
մար՝ կառուավարական շքանշաններով ու մեղալներով պարզեատե-  
ցին Հայաստանի էվակուահոսպիտալների աշխատողներից  
ավելի քան 500 հոգու.

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեպուբլիկայի  
Առողջապահության Մինիստրության, Բժշկական էվակուացիոն  
պունկտների վարչության, ՍՍՌՄ Առողջապահության Մինիստ-  
րության հրամանները մի անգամ չեն, որ նշել են էվակուահոս-  
պիտալների շատ աշխատողներին՝ շնորհելով նրանց շնորհնկա-  
լագրեր, պատվոգրեր, «Առողջապահության գերազանցիկի» նշան-  
ներ, Բուժման գործը լավագույն կերպով կազմակերպելու, վի-  
րաբուժական ակտիվություն ցուցաբերելու, բուժման նորագույն  
մեթոդները լայնորեն կիրառելու համար, որի հետեւանքով ապա-  
հովեց Սովետական Բանակի շարքերը վիրավարձողների մեծ  
տոկոս: ՍՍՌՄ Առողջապահության Մինիստրությունը 1944 թվին  
պատվոգրերով պարզեատեց ողջ Սովետական Միության մեջ 14  
հոսպիտալ, որոնցից մեկը՝ Հայկական ՍՍՌ Առողջապահության  
Մինիստրության ցանցից, Ի էվակուահոսպիտալը, որի պետն էր  
ընկեր Ավագյանը:

Հայկական ՍՍՌ Առողջապահության Մինիստրության աշ-  
խատողները, ինչպես և ողջ սովետական ժողովուրդը, ցուցաբե-  
րեցին համաժողավրդական ձգտում Սովետական Բանակի քաջարի  
վիրավոր մարտիկներին խնամելու դորժում, ինամելու նրանց,  
ովքեր իրենց արյամբ պաշտպանեցին Հոկտեմբերյան Մեծ Ռե-  
լուցիայի նվաճումները:

В. М. АВАКЯН

О ДЕЯТЕЛЬНОСТИ ЭВАКО-ГОСПИТАЛЕЙ АРМЯНСКОЙ ССР  
В ПЕРИОД ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

В работе этой автором охарактеризована многосторонняя деятельность эвако-госпиталей Армянской ССР в годы минувшей Великой Отечественной войны. Одно из самых основных и наиболее знаменательных достижений э/госпиталей, а именно, возвращение в строй весьма высокого процента раненых (от 59 до 83%), автором объясняется:

- 1) четкой организацией работы эвако-госпиталей;
- 2) хорошо поставленной квалифицированной медицинской помощью;
- 3) отличным сочетанием различных методов лечения (оперативного вмешательства, гемотрансфузий, физиотерапии, массажа, парафинотерапии, нафталанотерапии, лечебного питания и др.);
- 4) внедрением новых методов лечения, предложенных передовыми учеными СССР, в том числе и Арм. ССР;
- 5) организацией специализированной медицинской помощи;
- 6) надлежащей постановкой научно-исследовательской работы, значительно повысившей квалификацию рядовых врачей;
- 7) идеально-политическим воспитанием раненых и больных и обслуживающего персонала.

Самоотверженная работа и проявленная великая забота о раненых и больных не только советской медицинской общественностью, но и трудящимися Советской Родины обеспечили наилучшее лечение в уход за пострадавшими, в результате чего подавляющее большинство их было возвращено в ряды Советской Армии и к трудовой деятельности.